




Համադրել :

տատ պահել : Ղաչնակիցներուն իրաւունքները ընդհանրապէս բոլորն ալ հաւասար են , ու հասարակ ժողովներու մէջ ամէնքն ալ մէյմէկ վիճակ միայն կրնան ձգել . որով բոլորը կրլայ 17 վիճակ . իսկ ընդհանուր ժողովներու մէջ , այսինքն երբոր պէտք կրլայ հիմնական օրէնքներ դրնելու կամ փոխելու վրայ մտածել , կամ թէ հասարակաց օգտին վերաբերեալ մեծ բանի մը վրայ խորհուրդ ընել , ան ատեն ընդարձակ տէրու թիւները ինչուան չորս չորս վիճակ կը ձգեն , մէկալները 3 , 2 , 1 . անանկ որ բոլորը կրլայ 71 վիճակ : Լէս .

տրիայի կայսրը թէ դաշնակցութեան և թէ ժողովին գլուխն ըլլալով 4 վիճակ ունի . նմանապէս չորս չորս վիճակ ունին հինգ թագաւորութիւնները , որ են Բրուսիա , Պաւերա , Սաքսոնիա , Հաննովեր , Սիւրթինպերկ : Հասարակ ժողովի մէջ որ կողմի վիճակն որ աւելի է՝ ան կը յաղթէ . իսկ ընդհանուր ժողովի մէջ պէտք է որ իրեք մասին երկուքը միաբանի որ վիճակները զօրեն : Պատերազմի ատեն դաշնակից տէրութիւններէն մէկը առանց մէկալներուն հաւանութեանը չկրնար թշնամեաց հետ գործողութիւն մը տեսնել . նմանապէս

չկրնար իր կամքովը մէկուն հետ պատերազմ բանալ կամ հաշտութիւն ընել : Վերմանական դաշնակցութիւնը ընդհանուր ժողովով որոշած է 1822 ին, որ ամէն տէրութիւն իր բնակչաց շատութեանը համեմատ՝ 100ին 1 զինուոր տայ՝ պատերազմի ատեն . իսկ խաղաղութեւն ժամանակ 200ին 1 . և ասոնց ամէնուն գլխաւոր մէկ սպարապետ մը որոշողը ընդհանուր ժողովը պիտի ըլլայ : Խաղաղութեան ատեն Ղաթրիային տուած զօրքն է 94,800 հոգի , Բրուսիայինը 79,234 . մէկալններն ալ իրենց մեծութեանը համեմատ . բոլորը մէկէն 303,484 հոգի :

Վերմանական դաշնակցութեւն մէջ խիստ առաջ դնացած են արհեստները . գրեթէ քաղաք չկայ որ մէկ երկու երեւելի գործարաններ չունենայ : Ա՛յ աճառականութիւնն ալ շատ ծաղկած է , բայց այլեւայլ տէրութիւններուն իրարմէ տարբերօրէնքներ ու տուրքեր ունենալուն համար՝ դժուարութեւն կը բանի : Բոլոր դաշնակցութեան մայրաքաղաքն է Ֆրանքֆորթ Սայն գետին վրայ , վասն զի հոն կըլլայ ընդհանուր ժողովը , և օտար տէրութեաց դեսպաններն ալ հոն կընստին . իսկ երկրին բոլոր բնակիչներն են գրեթէ 35,000,000 : Վերմանական դաշնակցութեան 39 տէրութիւններուն 35 հատը միապետական կըսեպուն . իսկ չորսը հասարակապետութիւն , քիւ Ռուրէ , Ֆրանքֆորթ , Պրեմա և Համպուրկ : Սենք հոս Համպուրկին պատկերը դնելով՝ աս քաղաքիս վրայ քիչ մը աւելի տեղեկութիւն տանք :

Համպուրկ քաղաքը Լյպա գետին վրայ շինած է , ու Վերմանիայի էն վաճառաշաքաղաքն է . 1813ին ու 1814ին պատերազմներուն պատճառաւ բնակիչները հազիւ 60,000 հոգի մնացեր էին . իսկ հիմա նորէն շատցած են , ու 122,000էն աւելի կը համարուին : Վաղբին հին կտորին փողոցները նեղ ու աղտոտ են , տներն

ալ անկանոն ու գոթացի ձեւով շինուած ըլլալուն համար՝ խիստ ազեղ կերէնան . բայց նոր կտորը շատ գեղեցիկ ու զարդարուն է՝ լայն փողոցներով ու զուարճալի զբօսարաններով : Լյպեղեցիներուն մէջ ամէնէն գեղեցիկն է սուրբ Սիքայէլ , որ խիստ բարձր զանգակատուն ունի , տալին ալ ընդարձակ գետնափոր տեղուանք : Սուրբ Լիկոլայոս եկեղեցւոյն մէջ երգեհոն մը կայ որ Լարոպայի էն մեծ երգեհոններուն մէկն է : Շատ երեւելի շէնք է նաեւ հասարակաց հիւանդանոցը , բանտը , գրքատունը և ուրիշ տեղուանք . ուսումնական շէնքերուն մէջ ալ անուանի է նաւուղւորութեան դպրոցը , ու աստղաբաշխական դիտարանը : Բազմաթիւ գործարաններուն մէջ ամէնէն երեւելիները շաքար զտելու գործարաններն են , և ոմանք կը պատմեն զարմանալով՝ թէ միայն Համպուրկ քաղաքին մէջ տասը միլիոն լիպրէ շաքար ու խահվէ կերթայ ամէն տարի : Եւ քաղաքը թէպէտ զօրաւոր թումբերով պաշտպանուած է Լյպա գետին դէմ , բայց երբեմն մեծամեծ ֆրանսեր կը քաշէ աս գետէն , ու շատ տներ կը քանդուին : Լա սակայն անցեալ տարի մայիսի 5ին պատահած մեծ կրակին ֆրանսերը չափէ դուրս եղան . վասն զի գրեթէ երկու օր երկու գիշեր՝ այրեցաւ քաղաքը . 1500 տնէն աւելի մոխիր դարձաւ , 720էն աւելի ալ քանդուեցաւ . ասոնց հետ նաեւ եկեղեցիներ ու երեւելի շէնքեր . բոլոր կրակին ֆրանսը 200 միլիոն ֆլանքէն աւելի կը հասնեն :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Թիւ Ինչդէս պէտք է անցընել ժամանակը :

ՍԵՐԱՆ ԴԱՏԻՆ ԲՈՐ ժամանակը շուտ կանցնի , կըսէ Սենեկա , բայց չենք գիտեր թէ ինչ բանի գործածենք ան քիչ ժամանակը : Սեր կեանքը կան-